

ԵՐԿՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ ԿԸ ՇՆՈՐՀՈՒԻ

Շաբաթ 1 Սեպտեմբեր 1990ին Երուսաղեմի Հայոց Պատրիարք՝ Ամեն. Ս. Թորգոմ Արքեպս. Մամուկեան Ս. Յակոբեանց Միաբանութեան երկու տարեց ամդամներու « Ծայրագոյմ Վարդապետութեան աստիճան » շնորհեց:

Այդ տիտղոսիմ արժամացան Հոգշ. Ս. Ամուշաւան Վրդ. Զղջամեանը եւ Հոգշ. Ս. Ժիրայր Վրդ. Թաշնեանը:

Այս արարողութեամբ Վարդապետական տասը աստիճաններ կը շնորհուիմ թեկնածուիմ:

Յիշեալ երկու Հոգեւոր Հայրերը Ս. Յակոբեանց Միաբանութեան երկարամեայ ամդամներէն են: Հոգշ. Ս. Ժիրայր Վրդ. Թաշնեանը կրօնագիտական մարզիմ մէջ ծաւալում աշխատանք տարած է, մինչ Հոգշ. Ս. Ամուշաւան Վրդ. Զղջամեան լեզուաբանական գիտութիւններում մէջ հմտացած է:

Հայր Ամուշաւան իր կեանքի վառ տարիները մուխրած է լեզուաբանութեան ճիւղերում, ուսումնասիրելով ինքն լեզուներ: Հայերէնի թարգմանած է « Համաւորապիի Օրինագիրքը » եւ ուսումնասիրական խմամեալ աշխատանք մը մուխրած է Հայերէնի մեծամում լեզուաբան Հրաշեայ Անառնեանիմ: Հոգշ. Ս. Ժիրայր Վրդ. Թաշնեան Հայաստանեայց եկեղեցւոյ արարողական կարգ մը գիրքերու եւ ուղեցոյցներու թարգմանութեամբ զբաղած է տարիներու ընթացքիմ:

Տեղեկատու Դիւանը հարցազրոյց մը վարեց երկու վարդապետներում հետ: Ամոմը ըսիմ որ եկեղեցական կոչումը ունեցած են շատ փոքր տարիքէն:

- Հայր Զղջամեան ըսաւ.- « Դեռ մանուկ հասակէս զգացի որ եկեղեցիիմ կը պատկանիմ, ես զիմքս ուրիշ բան չեմ կրմար երեւակայել եթէ ոչ՝ միայն հոգեւորական մը »:

- Հայր Թաշնեան ըսաւ.- « Ես կրօնասէր ըմտամիքի մը միջավայրի մէջ մեծցած եմ, ծնողքս աստուածավախ եղած է եւ միշտ եկեղեցի յաճախած: Փոքր տարիքէս ես իմն ապահով կը զգայի եկեղեցւոյ մէջ »:

Հոգշ. Ս. Ամուշաւան Վրդ. Զղջամեան ծնած է Հալէպ եւ Երուսաղեմ եկած է 12 տարեկանիմ ու մտած Հայոց Պատրիարքարանի Ժառանգաւորաց Վարժարանը: Կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 1951ին: Երուսաղեմի մշամաւոր « Ecole Biblique » դպրոցիմ մէջ ծանօթացած է Աքքատեան բեւեռագիրքերում: Իր բարձրագոյմ ուսումը շարունակած է Փարիզ, Սորպոնի Համալսարանիմ մէջ, որմէ ետք մշամակուած է հոգեւոր հովիւ Սէյմը Էթիէնի (Լիոնի մօտ): Թուով հազարի հասնող Հայ գաղութը համեստ մատուռ մը ունէր այնտեղ՝ որ փոխարինուեցաւ մօր եկեղեցիով մը:

Հայր Զղջամեան Երուսաղեմ վերադարձաւ դասաւանդելու եւ Կիւլպենկեան Մատենադարանի տեսչութեան պաշտօնը ստանձնելու համար: Միաժամանակ դասաւանդած է Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանիմ մէջ: Իր ջանքերով Ֆրանսերէն լեզուի դասընթացք մը հաստատուած է Վարժարանէմ մերս: Հայր Զղջամեան գրասէր հոգեւորական մը եղած է: Ամ քաջալերած է իր աշակերտներում որ յաճախեն Կիւլպենկեան Մատենադարան եւ զբաղուիմ ըմբերցամութեամբ: Մատենադարանիմ մէջ փափաքը կը ծագի Եգիպտական Հերոկլիֆներու հոյակապ աշխարհը երթալու եւ սէր կ'ունենայ առաջնորդուելու դէպի ինքն աշխարհ:

Իր յաջորդ պաշտօնավարումը Ամման, Յորդանանի մէջ էր, ուր շուրջ 7000 Հայ կ'ապրէր: Հոն 15 տարի որպէս Հոգեւոր Հովիւ իր ծառայութիւնը բերելէ ետք (որու ընթացքիմ հոն կը կառուցուի մօր դպրոց եւ եկեղեցի), կարճ ժամանակուամ մը համար Երուսաղեմ կը վերադառնայ, որմէ ետք Շուէտի Հոգեւոր Հովիւ կը մշամակուի 1981ին: Սկանտինաւեան այդ երկրիմ մէջ 6000 Հայեր կ'ապրին: 1986ին դարձեալ Երուսաղեմ կը վերադառնայ:

Հայր Թաշնեան, որ Լիբանանէմ է, կուսակրօն քահանայ ձեռնադրուած է

1960թմ: Տարի մը ետք Թորոնթո, Գամատա կը ղրկուի, ուր 14 տարի կը մնայ: Ամե-
նայն Հայոց Կաթողիկոսի հրամանաւ 1975իմ Միլանո կը ղրկուի, իրրեւ հոգեւոր
հովիւ այդ փոքրիկ գաղութիմ:

Իտալիոյ Հայ գաղութը շուրջ 1000ի կը հասնէր: Իր առաջին պարտականու-
թիւնն էր Հայերէմ գիրքեր Իտալերէմի թարգմանել տալ: Աղօթագիրք մը եւս կը
քարգմանէ:

Իտալիոյ մէջ երկու տարի ծառայելէ ետք կ'ամցնի Շիքակօ, ուր չորս տարի
կը մնայ որպէս այցելու հովիւ, որմէ ետք դարձեալ Եւրոպա կը վերադառնայ եւ կը
պաշտօնավարէ Ֆրանսայի մէջ՝ ուր կը մնայ ցարդ:

Հայր Թաշմեան մասնաւորաբար աշխոյժ է երիտասարդական ձեռնարկներ կազ-
մաներպելու գործիմ մէջ: Ան քաջալերած է մօր սերունդի երիտասարդները որ մաս
կառնեն Եկեղեցւոյ բոլոր գործունէութեանց: « Եթէ Եկեղեցիմ պիտի վերապրի, մենք
մօր արիւնով պիտի սրսկուիմք », ըսաւ:

Այս գոյգ վարդապետները գոհումակութեամբ արտայայտուեցան որ Հայերը
մեզմաւոր սէր եւ համակրամք ունիմ իրենց Եկեղեցիիմ մկատմամբ:

« Ոչ մէկ բան կրմայ փոխել մեր Եկեղեցւոյ ազգայիմ մկարագիրը՝ որ շատ
մէջ պատմաբաններու կողմէ արդէմ վկայուած է », ամոմք ըսիմ:



Տրւնութիւն Ծայրագոյն վարդապետի Աստիմանի, ձեռամբ
Թորգոմ Պատրիարքի: Զախէմ՝ Ժիրայր Ծ. Վրդ. Թաշմեան
եւ Ամուշաւան Ծ. Վրդ. Զոհմեան (1 Սեպտ. 1996)